

## ՄԱՅՐ ԱԹՈՌ

**Մայիսի 1-ին Ն. Ս. Օծութեան յատուկ յանձնաբարութեամբ, իբրև ներկայացուցիչ վեհ. Հայրապետի, Երեան մեկնեց Տէորդ եպիսկոպոս, ներկայ լինելու Տաճկահայ գաղթականութեան վերաբերեալ գործերի համար յատուկ գումարուած համագումարին:**

**Համագումարի նախաձեռնող կազմակերպութեան պարիչները, ոլ. ոլ. Անդրանիկի, Արամ և Արտակ Դարրինեան յատուկ հեռազրով, Տփխիսից, խնդրել էին վեհ. Հայրապետի օրհնութիւնը գործին ձեռնարկելու համար:**

**Ն. Արքութիւնը բարեհաճել էր առանձին օրհնութեան Կոնդակ շնորհել համագուրի նախաձեռնողներին և բոլոր անդամներին, յորդորելով նոցա զալ ի համագործակցութիւն, քննելու և լաւագոյն կերպով կարգաւորելու գաղթականութեան վերաբերել գործերը:**

\* \* \*

**Մայիս 2-ին վեհ. Հայրապետի կողմից Ա. Տաճարի ժամ-օրհնողի պատուակալ պաշտօնը յանձնուեցաւ դեր. Տ. Մահակ արքեպիսկոպոս Այվատեանին, ինկատի առնելով որ Մայրավանուց ժամ-օրհնող Տ. Վրդանէս ծ. վարդապետը հրաժարուել էր այդ պաշտօնից իւր բազմազրադինելու պատճառով:**

\* \* \*

**Դեր. Տ. Ներսէս եպիսկոպոս, Առրաջատականի առաջնորդը, որ մեկնել էր Տփխիս իւր թեմի գաղթականուական զանազան գործերի կարգադրութեան համար, վերադարձաւ մայիս 3-ին Ա. Աթոռ,**

**Եոյն օրն առանձին ունկնդրութեան արժանացաւ վեհ. Հայրապետի կողմից, հետո ունենալով Սալմաստի քժշկական մասի ղեկավար, քժ. Յովհաննիսեանին:**

\* \* \*

Տարիներ առաջ Ն. Զուղայի ո. Ամենափրկիչ վանքի  
անունով գնուած էր Զիլիտ-սուլթանի մեծ որդի Զալալը-  
Դօվլէ-ի ժառանգներից, վերջնիս պատկանող երեք գիւղը, —  
Մանդիրաբան, Խոյզան և Զարնէ կամ Բոլորան, իրքն  
մշտնջենական սեփականութիւն ո. Ամենափրկիչ վանքի:

Վերջին քաղաքական հանգամանքներից և խառնակ  
դրութիւնից օգտուելու նպատակով, վաճառովը՝ Զալալը-  
Դօվլէն ունձգութիւններ էր սկսել և կամենում էր կալ-  
ուսմաները յետ ստանալ, զանտղան պատճառաբանութիւն-  
ներով:

Ի նկատի ունենալով, որ Թումանեան առևտրական  
տան միջոցով վնուած կալուածագրերը դանւում էին դեր.  
Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվատեանի, նախկին Սպահանի  
առաջնորդի մօս և իւր իսկ անունով, Ն. Զուղայի առաջ-  
նորդական խորհուրդը խնդրել էր հեռազրով Ն. Սրբութեան  
կարգադրութիւնը, որպէս զի Տ. Սահակ արքեպիսկոպոսն  
այդ կալուածագրերը փոխանցէ տիրապետողի՝ Ն. Զուղայի  
վանքին և ուղարկէ, դատ վարելու համար:

Վեհ. Հայրապետի հրամանով Տ. Սահակ արքեպիսկո-  
պոս Այվատեանը մայիսի 5-ին մելենեց Երևան այդ ձեւա-  
կերպութիւնները կատարել տալու, հետն ունենալով Ն.  
Զուղայի առաջնորդական խորհրդարանի նախանդամ Տ.  
Եզնիկ ծ. վարդապետին:

\* \* \*

Մայիսի 9-ին լրացաւ Աղդիս Վեհ. Հայրապետի եպիս-  
կոպոսութեան երեսուն և հինգ ամեայ յօրելեանը<sup>1</sup> Ն. Սրբ-  
ութիւնը չկամեցաւ առանձին շքով տօնել այդ օրը, այլ  
իրեւ երախտագիտութեան առանձին նշան դէպի իւր հո-  
գեոր ծնողի Տ. Գէորգ Դ-ի յիշատակը, յատուկ հոգեհան-  
գրստեան կարգ կատարեց հանգուցեալի շիրմի վերայ:

Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ, շրջապատուած  
Մ. Աթոռի միաբանական ուխտի անդամներով, Ն. Սրբու-  
թիւնը ներկայ եղաւ Գէորգ Դ-ի յիշատակին կատարուող  
հոգեհանգստեան կարգին:

Մայիս 9-ին, երկար տարիների տաժանակից կեանքից և ծանր աշխատանքից վերադարձաւ Մ. Աթոռի միաբան Տ. Կորիւն վարդապետ, իւր աքսորավայրից՝ Իրկուտսկ քաղաքից, ունենալով պատշաճաւոր վկայականներ, որ նոր իշաւակարգի հաստատուելով ինքն ազատ է արձակուած, իրըն քաղաքական յանցաւոր որ իւր բանդային պատիժը լրացնելուց յետոյ ուղարկուած էր Սիբիրեայ աքսորի:

\* \*

Ն. Սըրութիւնը, մտյիս 10-ին, հաճեց ընդունել Տ. Կորիւն վարդապետին, առանձին ունկնդրութեամբ:

Աքսորավայրի ծանը կապանքներից ազատուած հ. Կաչեւնը, կրկին իւր միջավայրի մէջ զզալով իրեն, ծնկաչոք Հայոց Հայրապետի առաջ իւր ջերմ զզացումների ու սիրոյ առհաւատչեան էր դնում, խնդրելով վերընդունել իրեն այն միարանութեան շարքը, որին ուխտել է և որին դալիս է կրկին և կրկին նուիրուելու և ծառայելու բոլոր ոյժերով, հոգու, մոքի ամբողջ կարողութեամբ այն Մեծ Հաստատութեան, որ Հայոց Եկեղեցի է կոչւում և Մ. Աթոռ, որոնց մտապատկերները երբէք, ոչ մի օր, ոչ մի բոպէ չէին շքանում իւր հոգու աշքերից իւր աքսորի դառնութեան բոպէներին և որոնք իրեն նոր ոյժ էին ներշնչում, որ պիտի դայ այն օրը, երբ բաց աշքով պիտի տեսնէ Մ. Աթոռը և պիտի ստանայ Հայոց Հայրապետի օրհնութիւնը:

Մը. Հայրապետը յուղուած շեշտերով դովելով նորահաւատարմութիւնը դէպի իւր ուխտն ու Եկեղեցին, օրնեց նորան, վերընդունելով միարանութեան շարքը:

\* \*

Մայիս 10-ին, Տ. Սահակ արքեպիսկոպոսը վերադառնալով Երևանից, յանձնեց Ն. Սըրութեան Դիւանին Ն. Զուղայի ո. Ամենափրկիչ վանքին պատկանող Երեք գիւղի Խօյկան, Սանդիրարան և Զարնա (Բոլորան) կալուածագրերը, որ իւր անունից փոխանցել էր տուել բուն տի-

բազետողի՝ Ն. Զուղայի վանքի անունով, վաւերակրած  
պաշտօնական պատշաճ ստորագրութիւններով։

Հայրապետական Դիւանն այդ վաւերագրերը յանձնեց  
Տ. Եղիշիկ ծ. Վարդապետին, որպէս զի վերջինս յանձնէ  
Ն. Զուղայի առաջնորդական Խորհրդարանին։

\* \*

Համբարձման տօնին, մայիս 11-ին, Ն. Սրբութիւնը  
հաճել էր Տաճար իշխել և ներկայ լինել ա. Պատարագին։

Պատարագիչն էր Տ. Տիրայր Եսլիսկոպոս։

\* \*

Մայիս 12-ին Ն. Սրբութեան ներկայանալու բաղա-  
նական Երեանի զաղթականական համագումարի անդամ-  
ներից պ. պ. Անդրանիկ, Պետրոս Տեփոյեան, Ներսէս  
Դշիոյեան և Երուանդ Փափազեան։

Պ. Անդրանիկ մանրամասն տեղեկութիւններ հաղոր-  
դեց զումարուած համագումարի և այն ելքի մասին, որ  
ժողովը հանգել էր։

Ն. Սրբութիւնը սիրով լսելով այդ զեկուցումը, օրհ-  
նեց պ. Անդրանիկին իւր կատարած անցեալի մեծ ծա-  
ռայութեան համար իւր հայրենիքի ազատագրութեան  
զործին։ Եւ իրքն նշան իւր առանձին համակրութեան  
հաճեց նուիրել, իւր իսկ յատուկ մակագրութեամբ, իւր  
կենդանագիրը պ. Անդրանիկին։

\* \*

Նոյն օրը Ն. Սրբութեան ներկայանալու բաղդ ունե-  
ցաւ Երեանի համագումարին մասնակցելու եկած Երգնելայի  
ներկայացուցիչ, բժ. Պարթև Սէյխեան։

\* \*

Մայիս 13-ին Երեանից Մ. Աթոռ ժամանեցին Տաճ-  
կահայ զաղթականական համագումարի առենապետութեան  
կազմը և համաժողովին մասնակցող անդամները Ն. Սրբ-  
ութեան ներկայանալու և իրենց որդիական յարդանքները  
մատուցանելու։

Ն. Սրբութիւնը հաճեց նոցա ամենքին առանձին առանձին ունկնդրութիւն շնորհել:

Ն. Սրբութեան ներկայացան դաղթականութեան համագումարի ատենապետութիւնը, — սլ. սլ. Էնոն Շանթ, Վահան Փափազեան և Արտակ Դարբինեան, համագումարի անդամներ՝ սլ. պ. Աւետիս Թերզիրաշեան, Յակոբ Տէր Զաքարեան, Վան-Փուշ, Բարունակ Տէր Յարութիւնեան, Ռուբէն Յովինանեան, Վրթանէս Փափազեան, Փանոս Թերլեմեզեան, Ամբատ Բորոյեան, Դ-ր Բոնապարտեան, Պ. Յովսէփեան և Տրդատ Ղազանձեան: Համագումարի, ինչպէս ատենապետութեան կողմից սլ. Վահան Փափազեան շնորհակալութիւն յայտնեց այն մեծ ուշադրութեան համար, որ Ն. Ս. Օծութիւնը հաճել էր ունենալ դէպի համագումարը և նորա առաջ դրած ինդիրները և առանձին կոնդակով օրհնել էր նոցա գործն ու նպատակը, ամենքին համերաշխ դորժակցութեան հրաւիրելով և իւր կողմից ևս առանձին պատուիրակ ուղարկելով Տ. Գէորգ Եպիսկոպոսին, որի նորկայութիւնը համագումարի ելքի համար իւր դրական արժէքն ունեցաւ:

Ապա մանրամասն զեկոյց համագումարի գործառնութեան զանազան մասերի նկատմամբ, — դաղթականների այժմեան վիճակի, ազադայի բարօրութեան, նովաստների բաշխման, դոլրոցական կեանքի, վերադարձի, տեղաւորման, վերաշինութեան և նոցա ապագայ տնտեսական և այլ կենսական հարցերի հետ կապուած ինդիրների մասին: Այս ըոլոր ինդիրները, իրեն զուտ աղջային-հանրական հարցեր, Ամենայն Հայոց Հայրապետի առանձին հոգածութեան առարկայ եղած լինելով, յոյս ունին, որ այսուհետեւ, գործի կազմակերպութիւնից յետոյ ևս, առաւել շափով իսկ Ն. Սրբութեան ուշադրութեան պիտի արժանանան:

Վեհ. Հայրապետը իւր դոհունակութիւնը յայտնելով համագումարի ելքի նկատմամբ, յոյս յայտնեց, որ մօտիկ ապագայում կազմակերպուելիք վարչութիւնը ի վիճակի կլինի իւր վրայ դրած և առած պարտիքն, ըստ կարելոյն, ամենայն բարեխղճութեամբ, հեռատեսութեամբ և սիրով

տանելու. Խնչ վերաբերում է իւր հովանաւորութեան և աջակցութեան, կարող են ապահով լինել, որ ինչպէս մինչեւ այժմ, այսուհետեւ ևս միշտ իւր հովանաւորութիւնը կտարածէ: Իւր հօտի վերայ և աջակցութիւնը ցոյց կը տայ այն բոլոր խնդիրների նկատմամբ, որոնք իւր տառապելալ որդիների ծանր զրութիւնը ամոքելու պիտի տանեն:

Ն. Մըրութիւնը օրհնելով ամենքին իւր ցանկութիւնը յայտնեց ի մօտոյ տեսնելու նոր կազմակերպութեան բարի պառագներն ու արդիւնքը:

Պատգամաւորներն ամենքն ևս այդ օրը վայելելով Ա. Աթոռի հիւրասիրութիւնը միարանակից անդամներից Տ. Տ. Ներսէս, Տիրայր, Գևորգ, Զաւէն Եպիսկոպոսների և Կորիւն վարդապետի մասնակցութեամբ, մտքերի և զզացու մեերի փոխանակութիւն ունեցան և երեկոյեան վերադարձուն Երեան:

Նոյն օրը Ն. Մըրութեան ներկայացաւ առանձին ունկընդութեամբ Տրապիզոնի հոգևոր իշխանութեան ներկայացուցիչ Տ. Մեսրոպ արք. Քի. Մելեան, մանրամասն զեկուցութեալով վեհ. Հայրապետին այդ շրջանի հայութեան մասին, ինչպէս ազգային սեփականութիւն վանքերի ու եկեղեցիների կալուստների և նոցա շահագործման եղանակի և այլ խնդիրների մասին:

Մայիս 15-ին Ատրպատականի առաջնորդ զեր. Տ. Ներսէս Եպիսկոպոսը մեկնեց իւր պաշտօնատեղին:

Մեկնելուց առաջ Ն. Մըրութիւնը առանձին յանձնարարութեամբ պատուիրեց գնալ Վանի և շրջակայքի մասերը դիտելու և իւր դեկուցազիրն ուղարկելու իրեն:

Ի նկատի առնելով, որ Տաճկական Հայաստանի զրաւած ընդարձակ Երկրամասը կարիք ունի առանձին հոգևոր տեսչութիւնների վեհ. Հայրապետը բարւոք համարեց այդ ամբողջ Երկրամասը բաժանել Երեք շրջանի և իւրաքանչիւրի համար նշանակել առանձին հոգևոր տեսուչ և հսկող,

որոնց պարտաւորութեան սահմանի մէջ է մտնում ծանօթանալ այժմ այնտեղ գտնուած հայ ժողովրդի վիճակի հետ, թէ ըստ տնտեսականի, թէ ըստ բարոյականի, ի յայտ ածել վանքերի, եկեղեցիների, դպրոցների և այլ ազգային հաստատութիւնների կալուածները, ժողովել նոցա կալուածադրերը, եթէ կան, աշխատել ազատել աւերածութիւնից, փրկել նախնեաց յիշատակարանների մասցորդները, նշանակել կարեռը վայրերում և վանքերում հակողներ, վանահայրեր, օգնել ժողովրդին վերահաստատուելու իրենց բնակավայրերում, ըստ հնարաւորութեան են'.

Այս նկատումներով վան, Բոյազէտ, Ալաշկերտ, Մուշ և Խնուսի մասերը համարուեցան մի հոգեոր տեսչութեան շրջան և յանձնուեցաւ Առավատականի առաջնորդ Տ. Ներսէս եպիսկոպոսին, հովուելու այդ մասին ես:

Երկրորդ շրջանի մէջ մտան կարին, Բասէն, Բաքերտ, Դերջան, Մամախաթուն, Երիզա և Քղի և շրջանի տեսչութիւնը յանձնուեցաւ Տ. Զաւէն եպիսկոպոսին,

Երրորդ շրջանի մէջ մտան՝ Տրապիզոն, Գիւմիւշխանէ, Կիսկիմ, Սպեր, Թորթում, որի տեսչութիւնը յանձնուեցաւ Տրապիզոնի հոգեոր իշխանութեան ներկայացուցիչ Տ. Մեսրոպ ա. քհ. Մելեանին:

Իւրաքանչիւրն ստացաւ Ն. Սրբութիւնից յատուկ հրահանդ, առանձին-առանձին կոնդակներով և իրենց վարած տեսչութեան համար համարատու և պատուսիանատու են Ամենայն Հայոց Հայրապետին:

\* \* \*

Նոյն օրը, մայիսի 15-ին, Տ. Մեսրոպ ա. քհ. Մելեանը մեկնեց Տրապիզոն, իւր պաշտօնավայրը:

\* \* \*

Տաճկահայ գրական յայտնի դէմքերից շնորհալի Տիկ. Զավէլ Եսայեան ժամանեց, մայիս 15-ին Մ. Աթոռ:

Մեծ. Տիկինն արժանացաւ Ն. Սրբութեան առանձին ունկնդրութեան: Տիկնոջ հետ էր և հայ գրադէտ պ. Վեռապեր (Մարտ. Դարաղեան),

Մ. Աթոռի միաբանութիւնը, չնայելով իւր բազմադարեան գոյութեան, չունէր իւր առանձին, հաստատուած և որոշ ձևակերպութեան ու կաղապարի վերածուած կանոնադրութիւնը։ Ապրում էր և դործում աւանդական կարգերով, որոնք սերնդէ սերունդ անցնելով կանոնական կերպարանք էին ստացած, որից ժամանակը, շրջանը, հանկացողութիւնները շատ ու շատ բաներ էին փոխում։

Ն. Սրբութիւնն ընդառաջ զնալով այն պահանջին, որ Մայրավանքի Ռւխտի կեանքը պէտք է որոշ պատկեր ստանար, որ պահանջէր թէ Ռւխտեալներից իւրաքանչիւր անդամի և թէ վանքի ներքին կեանքի բարզաւաճման համար, բարեհաճեց մայիս 15 № 843 իւր ս. Կոնդակով, յանուն միաբանութեան բոլոր անդամների, արտօնել կազմել միաբանական Ռւխտի ներքին կանոնադրութեան նախադիծ և իրեն ի վերջնական հաւանութիւն և ի հաստատութիւն։

Միաբանութեան անդամները իրենց շնորհակալիքը և որդիական զգացութերը յայտնել ինդրելով Սրբակ. Հայրապետին պատգամարեր Տ. Չուսիկ արքեպիսկոպոսի միջոցով, ընտրեցին մի առանձին յանձնախումբ, որ սիստեմակէր միաբանական կանոնադրութեան նախադիծը։ Այդ նախադիծը պիտի անցնէր միաբանական ընդհ. Ժողովի քննութիւնից և ապա վերամշակուածն առաջի առնուէր Ն. Սրբութեան։

Յանձնաժողովի անդամներ ընտրուեցան Տ. Տ. Տիրայր, Գէորգ և Զաւէն Եպիսկոպոսները և Կորիւն և Գիւտ վարդապետները։



Տպարանի վարչութեան նախադահ Տ. Գիւտ վարդապետը իւր բազմազրադ դրութիւնն ի նկատի ունենալով խնդրել էր Ն. Սրբութեան հանութիւնը իրեն տպարանից ազատ համարել։

Վեհ. Հայրապետը յարգելով նորա ինդիրը հանեց տպարանի վարչութեան նախադահի պաշտօնը յանձնեց Տ. Կորիւն վարդապետին, իսկ անդամութեան նշանակեց նորընձայ Տ. Ներսէս արեղային։

Մայիս 21-ին, Հոգեգալստեան օրը, Ն. Արքութիւնը հաճեց Տաճար իջնել և ներկայ լինել ս. Պատարագին։ Պատարագիչն էր Տ. Դեռդ Եպիսկոպոս։

\* \*

Մայիս 22-ին Տփխիսից Մ. Աթոռ վերադառն Տ. Վարդանին վարդապետ։

\* \*

★

Մայիս 25-ին, Եղբայրական Օքնութեան Գլխ. Յանձնաժողովի նախագահ Տ. Դեռդ Եպիսկոպոս դնաց Թաղին և շրջակայ զիւղերը, զաղթականների տնտեսական վիճակին ի մօտոյ ծանօթանալու և նորա սուր կարիքներին աեղն ու տեղը բաւարարելու։

\* \*

★

Մայիս 29-ին կատարուեցաւ ս. Հոփիսիմեանց տօնը, սովորական կարգով, Միարանական ամբողջ Ուխտի, զիւղի և շրջակայ զիւղերից եկած ժողովրդի ուխտագնացութեամբ։

Ն. Արքութիւնը հաճել էր գալ ս. Հոփիսիմեանց վանքը և ներկայ լինել ս. Պատարագին, որի վերջը իջաւ ս. Կուսիդրաբարանը՝ աղօթելու և նորա միջնորդութիւնը հայցելու իւր տառապնալ հօտի վրելութեան համար։ Արք. Հայրապետի օրինակով միաբանական Ուխտն ևս իջաւ դամբարանը, համբուրելու և աղօթելու։

Պատարագիչն էր Տ. Մատթեոս Եպիսկոպոս։ Պատարագից յետոյ կատարուեցաւ հոգեհանգստեան ընդհանուր կարգ։

Միարանութիւնը հիւրասիրուեցաւ և հանգստացաւ վանահօր մօտ։

\* \*

★

Յունիսի մէջ կազմուելիք հոգեոր դասի ներկայացուցիչների նախապատրաստական ժողովի պարագմունքները դիւրացնելու համար կազմուեցաւ մի տոանձին Յանձնախումբ, որի նպատակն ու դրազման առարկաներն էին

ի մի զումարել այն ըոլոր կարծիքները, առաջարկները, ծրագիրներն ու ցանկութիւնները, որ ստացւում էին ժողովի առթիւ զանազան թեմերի քահանայական դասից, անհատներից ևն:

Ժողովի անդամներ կոչուեցան Միաբանութեան ընտրութեամբ Տ. Զաւէն եպիսկոպոս, Տ. Եղիշէ և Տ. Վարդան վարդապետները, որոնց և Վեհ. Հայրապետը հաստատեց այդ պաշտօնի համար մայիս 29-ին:

Յունիս 3-ին կատարուեցաւ ո. Գրիգոր Լուսաւորչի ելու ի վիրապէն տօնը:

Ն. Արքութիւնը հաճեց ներկայ լինել ո. Պատարադին: Պատարագիչն էր Տ. Զաւէն եպիսկոպոս:

Յունիս 3-ին, Երեկոյեան ժամերգութեան Վեհ. Հայրապետը հաճեց Տաճար իջնել, հանդիսաւոր թափորով:

Մ. Տաճարի երրորդը հնչելով, Վեհարանի զիխաւոր մուտքի առաջ ժողովուեցան Մ. Աթոռի ամբողջ միաբանութիւնը, զլուխ ունենալով եպիսկոպոսական դասը, շուրջառով, սպասելով Ն. Արքութեան վեհարանից իջնելուն:

Միաբանութեան հետ, զգեստաւորուած կանգնած էին նաև քահանայական դասի ներկայացուցիչներից շատերը, ապա երգչական խումբը, տօնական շապիկներով և Շեմորանի աշակերտութիւնը, իրենց դաստիարակների հետ:

Վեհարանի մուտքից մինչև Տաճարի զիխաւոր մուտքը, երկերգ, շարուած էին Մ. Աթոռի հոգանու տակ սպասարուած վեց հարիւրից աւելի զաղթական որբերը, տօնական զգեստով:

Վեհարանի զիխ. մուտքի առաջ սպասում էր աւագ-լուսարարը, Հայրապետական գաւազան ու խաչով, ապա Հայրապետական ամպհովանին, որ կրում էին Ախողի պաշտօնեաները: Ամպհովանու առաջ երկու սարկաւագ կրում էին Հայրապետական Բօղը, որոնց մօտ կանգնած էին շորու

բուրվառակիր սարկաւագ, իսկ ամսվավանու երկու կողմք՝ վեց քշոցակիր:

Ն. Սրբութիւնը իջաւ Վեհարանից ուղեկցութեամբ Դիւանսպետ Տ. Տիրայր եպիսկոպոսի, Առաջից զնում էին Տ. Վարդան վարդապետ և Ներսէս արեղայ, որոնք կրում էին Հայրապետական մեծ խաչն ու դաւագանը:

Ն. Սրբութիւնը շուրջառ առնելով, մտաւ ամսվավանու տակ, օրհնելով հանդիսի սկզբնաւորութիւնը առաջից դէպի Մ. Տաճար, տեառնազրելով աջ և ձախ ժողովուած խուռն ժողովրդի բազմութեան, որոնցից մեծագոյն մասը զաղթականներ էին և որոնց համար այդ հանդէսը մի կատարեալ նորութիւն էր, որովհետեւ զաղթականական դառն օրերից ի վեր այդպիսի հանդէսներ չեին կատարւում Մ. Աթոռում այլ եւ:

Իբրև մի առանձին պահանջ ժողովրդի կրօնական զգացումների, Վեհ. Հայրապետը զիջել էր այդպիսի հանդիսաւորութեամբ իշխել այս անգամ, որ մեծ հոգեկան բաւականութիւն պատճառեց զաղթական հայութեան:

«Հրաշափառի» երգակցութեամբ և զանգակների ներդաշն ղողանջներով մտնելով Մ. Տաճար սկսուեցաւ «Ռւրախ լեր և Եկեղեցի» շարականը, որի վերջանալով, Ն. Սրբութիւնը արտասահեց «Ռւրախ եղէ» սաղմոսը, ասլա օրհնելով ու տեառնազրելով հաւատացեալներին, որոնք ահազին բազմութեամբ Տաճար էին եկած, սկսուեց երեկոյեան, սովորական ժամերգութիւնը, ապա և նախատօնակ կաթողիկէ և Էջմիածնի մեծ տօնի:

Երեկոյեան ժամերգութիւնից յետոյ Ն. Սրբութիւնը քահանայական դասի, միաբանական ամրողջ Ռւխտի ուղեկցութեամբ տուշնորդուեցաւ Վեհարան, որի մուտքի տուշ օրհնելով Եկեղեցական դասն ու խոնուած ժողովրդին, բարձրացաւ Վեհարան:

\* \* \*

Ն. Վեհափառութիւնը իրազեկ լինելով Կովկասնան Յանձնակատար ժողովի անդամ պ. Միքայէլ Գալուշան-

եանի իւր պաշտօնից հրաժարուելու մտադրութեան մասին, բարեհաճեց հեռագիրն ուղարկել ոլ. Պապաջանեանին, յունիս ծ-ին.

\*Տփխիս, Անդրկովկասեան Յանձնակատար ժողովի անդամ Միքայէլ Պապաջանեանին.

\*Տեղեկանալով Զեր մտադրութեան մասին, որով կառավենում էք հրաժարուի կովկասի երկրամասի Յանձնաժողովի անդամակցութիւնից և որ այս նկատմամբ արդէն որոշ դիմումներ էք արած, ի նկատի ունենալով ծանր սկացութիւնը երկրի և հայ աղգործնակութեան, որի կենտրոնական այլ և այլ հրատապ հարցերի հետ կարող եղաք սծանօթանալ Զեր կարճ ժամանակեայ պաշտօնավարութեան ընթացքում, ի նկատի ունենալով այն վստահութիւնը, որ աղգործնակութիւնն ունի դէպի Զեզ, որ արատյայտուել է Զեր Դումայի անդամակցութեան և իւր Շներկայացուցչի ընտրութեամբ, ի նկատի ունենալով Ժամանակաւոր Կառավարութեան կատարեալ վստահութիւնը «դէպի Զեզ, որ Զեզ վստահացաւ Յանձնակատար ժողովի առնդամակցութիւնը, ապա և այն հանդամանքը, որ դժուար «է փոխարինել Զեզ այլ անձով ժողովրդական ընտրական սիրաւակարդի ձիշդ պահպանութեամբ այժմեան հանդաւամանքներում, — այս ամենը այնպիսի ծանրակշիռ տուեալսներ և պարականեր են հանդիսանում Մեր աշքում որ ռոտիպում են Մեզ յորդոր կարդալ Զեզ յետ կենալ Զեր սմտադրութիւնն ի կատար ածելուց:

\*Հասարակական դործշի ուղին փշով է սփռուած, սակայն նորա տռաջին և զլիաւոր դրդիչը պէտք է լինի սծոռայել ժողովրդի գործին ամրողջ հոգով և սրտով և ռոյժերով. այդպիսի մէկն ենք ճանաշում Մենք Զեզ, ինչպէս և մտաւորական դասի մեծ մասը և հասարակական սպործշին զնհատող մեր ժողովուրդը. Մեր ջերմ ցանկութիւնն է այդպէս տեսնել Զեզ Զեր այժմեան պաշտօնի սմէջ, որի համար և առաքում ենք Զեզ Մեր Հայրապետական օրհնութիւնը և կատարեալ վստահութիւնը, իրբե

«ընտրեալ Պետ հայ եկեղեցու և իրրի օրինական ներկաւացուցիչ Հայ ժողովրդի»:

«Միաժամանակ և զիմում ենք Նախարարների Խորհրդի պ. նախագահին՝ Զեր միջնորդութիւնը անիրազորածելի դարձնելու համար»:

ԳԵՐՈ ԳԵ,

ԿԱԹՈՒՂԻԱՌԱ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅՑ,

Նոյն մոքով հեռագրուեցաւ, նոյն օրը, նաև Նախարարների Խորհրդի նախագահ իշխան Դէորդիյ Եւզինեիչ Լ'վովին:

\* \* \*

Յունիսի 6-ին Միաբանական ժողովի յանձնարարութեամբ, Միաբանական կանոնադրութեան նախագիծ կազմող Յանձնաժողովի անդամներ, Գեր. Տ. Տիրայր, Դէորդի Զաւեն Եպիսկոպոսները և Կորիւն ու Գիւտ վարդապետները ներկայացրին իրենց կազմած նախագիծը Միաբանութեան ժողովին:

\* \* \*

Յունիսի 6-ին, Ն. Սրբութիւնը բարեհաճեց օդավոխութեան ելնել և մի փոքրիկ ուղևորութիւն յանձն առաւ, ուղեկցութեամբ Դիւանապետ Տ. Տիրայր Եպիսկոպոսի և Դրան՝ Տ. Զաւեն Եպիսկոպոսի, դեպի Արաքսի ափը:

Ժամը 10-ին համելով Արաքսի ափին ընկած Մարգարա գիւղը, Վեհ. Հայրապետը կամուրջի մօտ իջնելով կառքից, ուրով իջաւ զետափի մօտ եղած պարտէզն ուր և հանգստացաւ բացօղեայ, պարտիզի մէջ և զետը նայող մի նուարդանի տակ: Պարզ, շինական շրջապատը, սպասաւորող զեղչուկ ընտանիքի սիրալիր յարդանքներով լի պատրաստակամութիւնը և այն հպարտ ներքին զգացումը, որ Ամենայն Հայոց Հայրապետն իրենց սպարզուկ յարկի տակ է, իջած հետզհետէ վանեցին Վեհ. Հայրապետի թախիծն ու մտահոգ վիճակը, որ տարիներից ի վեր, Հայի ճակատագրի ու բաղտի հարուածները դրոշմել են Նորա

վերայ և հայրենիքի այդ բաց վայրում բացուեցաւ և Նորա սիրտն ու հոգին:

Նախաճաշի ժամանակ Սրբ. Հայրապետն այսպէս բացառեց իւր այդ օրուայ ուղերութեան շարժառիթը. Ռւզիդ 45 տարի սորտանից առաջ, յունիս 6-ին, երջանկալիշատակ Գէորգ Դ. Կաթուղիկոսի հրամանով վնարով Իզղիք տեղական աղղային երկուու դպրոցների տարեկան հարցաքննութիւններին ներկայ լինելու, առաջին անդամ տեսայ պատմական Երասխը. Դետը յործանուու, ներկայիս փառահեղ կամուրջը զեռ ևս գոյութիւն չունէր, ստիպուած էինք խախուտ լաստով անցնել միւս կողմը, կատարեցի վրաս դրուած պարախը, ուրախութեամբ և սիրով, ինչպէս միշտ, կեանքիս ընթացյրում. Վերադարձին, դառնալով դէպի հայրենի յիշատակների լուռ վկայ գետի, մտովին հրաժեշտ տուի, առելով, «Սրաքս, Երբ և ի՞նչ հանդամանքների մէջ պիտի երկին տեսնուինք, բարերադդ, թէ աւելի ծանրու Այժմ, վանական կեանքիս արևմուտքին, ծերունի Հայրապետս, փափագեցայ, այսքան տարիների անջատումից յետոյ երկին տեսնել իմ Հայրենի որբազան զետը և պատգամ հարցնել նորանից, Հայի դառնութիւնն ու արցունքը լուացող, ազատութեան և յանդուդն մեծութեան նշանակ ծերունի, սպիտակափառ Մասիսի փեշերը լիզող Սրաքսից մի քանի կաթիլ զովարար ջրով ամոքել սիրոս ու հոգիս, միտքս ու ամբողջ էութիւնս պատող վշտերն ու հոգսերը և հոգով հանգստանալ, զոնէ, մի քանի քողէ. Սրբազն Գանգէսի ջրերի մէջ է դանում Հնդիկն իւր հոգու անդորրութիւնը, լուացուելով ու որբուելով և մի քանի կաթիլ նորա ջրից խմելով. ոչ պակաս Հայի համար սրբազն Երասխի մէջ եմ կամենում զտնել մի քանի քողէ հոգու և սրտի անդորրութիւն, վշտերիս մոռացումն, անցեալը վերյիշելով և պատմականի քողէներ առըելով:

Ապա ծերունի Հայրապետը լուռ ու խոհուն հայեացքը ձգելով մի քանի քայլ միայն հեռու լոիկ հոսող Սրաքսին, յիշեց բանաստեղծի տիսուր քառեակը,

Արաքս ինչու ձկանց հետ  
Պար չես ըռնում մանկական,  
Դու՝ դեռ ծովը չը հասած  
Սգաւոր ես ինձ նման:

Անշուշտ և նա սգաւոր է և վշտարեկ ինձ նման, յա-  
քեզ յուզուած Հայրապետու: Ազգիս թշուառութիւնների,  
վշտի, կորստեան փոքրիկ ժամանակամիջոցն ինձ կորաց-  
րել է իւր ծանրութեան տակ, ինչպէս և իմ ամբողջ ժո-  
ղովրդին կորաքամակ դարձրել. հապա որչափ առաւել ևս  
խայտալուց կորուած ծեր Արաքսը: Ըմբռուսն ի կամրջոց  
երասիր, տեսէք, լոիկ, կարծէք, իւր զոյութիւնն իսկ  
մոռացած հեռանում է հայրենի ափերից, իւր զառնութեան  
բաժակը օտարի հետ գրկախառնուած աղի Կասպից ջրերի  
մէջ թաղելու համար: Արդեօք Հայի դառնութեան բաժակն  
ևս աղի ջրերի թափի մէջ պիսի թաղնուի, թէ նոր արև,  
նոր կեանք պիտի ծագէ իմ ժողովրդի, իմ հոգեոր զա-  
ւակների համար . . .

Բոլորովին յուզուած ծերունազարդ Հայրապետն ելաւ  
իւր տեղից, մէն-մենակ իջաւ Արաքսի ափը, մնաց մի  
քանի ըռալէ լուռ, ակնապիշ հայեացքն ուղղած Արաքսին  
և նոյն խոհուն դէմքով դարձաւ իւր տեղը:

«Գիտէք, ասաց, Մայր Արաքսը սլատասխանեց իմ  
նորան ուղղած հարցերիս. յայտնեց իւր սլատզամը . . .  
սակայն, առ այժմ, վաղաժամ է յայտնել այդ . . . ժամա-  
նակը կզայ դորան . . .»

Նախաճաշի ժամանակ, երբ մատուռակը զինի մա-  
տոյց, ծերունի Հայրապետն ասաց. «Գիտէք, որ զինի ես  
վաղուց է չեմ խմում. սակայն դուք վայելեցէք, դարձաւ  
իւր ուղեկիցներին, որովհետեւ զա իմ որդոց քրտինըն ու  
արեան կաթիլների որրանն է, որ Հայոց բարեկ արեր ջերմա-  
ցըն, հասցըն է և ոսկու գոյն տուել, որպէս զի ճաշակողն  
առանց զդալու, որ իւր հարանց, իւր քոյլերի ու եղբայր-  
ների արեան կաթիլներն է ճաշակում, հոտոտայ և զզայ,  
որ դա իւր սեփականն է, նոր ողի առնէ, նոր ոյժ զգենու,  
առաւել ևս նոր եռանդով իւր հայրենիքի շինութեան գոր-

ծին կպչելու. խմեցէք և յիշեցէք բանաստեղծի խօսքերը,  
թէ

Այս բերքն է Հայոց երկրէն  
Հայաստան տընկած նոյէն,  
Արաքսայ ջրով ջրած  
Հայոց արեով հասած։

Տիսուր վերյուշումների, առաւել ևս մօտիկ, շատ մօտ  
անցեալի յուշերի և ապագայ գեղեցիկ յոյսերի, նոր կեանքի  
արշալոյսի պատկերների մի ամբողջ աշխարհ էր, որ եկել  
պատել էր վանական, պարզուկ նախաճաշի սեղանի շուրջը,  
ուր Հայրապետն իւր սրտի կեանքն էր ապրում, իսկ ուն-  
կընդիր սեղանակիցները ապագայով էին տարուած և այն-  
տեղ վինտոռում վշտի ու կորուստի ամոքումը։

Երեկոյեան պահուն, վերադարձի ժամանակ, ծերու-  
նազարդ Հայրապետը կըկին մօտենալով Երասխին, օրհնեց  
հայ երկիրն ու ժողովուրդը, ապագայի յոյսերի շողով  
տեսնելու այդ երկիրն ու իւր հօտը, ջերմ զգացումով  
շեշտելով բանաստեղծի քառեակը։

Վարդի թփեր թող բուսնեն  
Քո հիւրընկալ ափի մօտ,  
Մոխակները նոցա մէջ  
Երգեն մինչև առաւօտ,

Երբ մենք շենք լինիլ, սակայն մի նոր, առաւել բաղ-  
տաւոր հայութեան սերունդ կտեսնէ բաց աչքով և մեր  
հոգու աչքերն ևս բացուած, հոգով կմխիթարուենք, որ  
Հայն ևս իւր ազատ օրն ու արևն ունի վայելելու։

\* \*

Յունիս 5-ին, ս. Էջմիածնի տօնին Ն. Սըրութիւնը  
քարեհաճեց Տաճար իջնել և ներկայ լինել ս. Պատարագին։

Պատարագիչն էր Տ. Սահակ արքեպիսկոպոս Այվա-  
տեան։

Տօնի առթիւ Տաճարում քարող խօսեց Տ. Գէորգ Ե-  
պիսկոպոսը, ընարան ունենալով, ոԵկայք շինեսցուք Սուրբ  
զիսորանն լուսոյ։

Պատարագից յետոյ կատարուեցաւ Հայրապետական  
մաղթանք, Ն. Ա. Օծութեան ներկայութեամբ:

\* \* \*

Յունիս 8-ից սկսած հետզհետէ Մ. Աթոռ էին ժամանակամ հոգևորական դասի զանազան ներկայացուցիչները, այլ և այլ վայրերից, մասնակցելու ու Էջմիածնում լինելիք Յունիս 12-ի եկեղեցական նախապատրաստական ժողովի համադումարին:

Ժամանակ հիւրերի ընդունելութեան համար պատրաստած էր միաբանակից անդամների համար միաբանութեան անդամների մօտ, իսկ դրսից ժամանող քահանայական դասի համար՝ Շեմարանի վերին և ստորին յարկաբաժնի մէջ ընակարաններ։ Հիւրերի համար պատրաստած էր և ընդհ. սեղանատուն՝ Շեմարանի հաշարանում, ուր նոքա ստանում էին թէյ, ճաշ, ընթրիք ևն. ի հաշիւ Մ. Աթոռի։

Հիւրերի ընդունելութեան հոգածութիւնը յանձնուած էր Վանական Կառավարութեան, յանձին նորա նախազան Տ. Վրթանէս ծ. վարդապետի և Կառավարութեան անդամ Տ. Թաղէոս վարդապետի։

Նոյն օրը ժամանեցին Բագուից Տ. Արսէն վարդապետ, Տ. Եղիշէ և Տ. Տաճառ առագ-քահանանաները, որոնք և բազումնեցան ներկայանալու Ն. Արքութեան և նորա օրհնութիւնն ստանալու։

\* \* \*

Յունիս 9-ին ժամանեցին Մ. Աթոռ՝ Լրաստանի առաջնորդ Տ. Մխիթար եպիսկոպոս, Դարարաղի թեմի կառավարիչ Տ. Վահան եպիսկոպոս, և Բեսսարաբիայի վիճակ-առենի նախազանող Տ. Մուշէ վարդապետ, Գանձակի վոհիանորդ Տ. Լեռն վարդ. և Նուխու վոհիանորդ Տ. Երեմիա վարդապետ, որոնք և արժանացան նոյն օրը Վեհ. Հայրապետի ունկնդրութեան և օրհնութեան։

\* \* \*

Յունիս 10-ին ժամանեցին Մ. Աթոռ, Տ. Արքահամ քհ. Դաղաղեան, ներկայացուցիչ Ախլյասայի քահանայութեան, Տ. Մեսրոպ քհ. Մելեան, ներկայացուցիչ Բաթումի, Տ. Արտէն քհ. Մարդարեան, ներկայացուցիչ Վլադիկաւկազի, Թեմիր-խան Շուրայի, Պետրովիսկու և Գրօղնայի, Տ. Տիգրան քհ. Վարդանեան, ներկայացուցիչ Դերբենդի և Դուրայի շրջանների, Տ. Մմբատ քհ. Մարզուեան, ներկայացուցիչ Անդրեան շրջանի Առկանստ, Զարշոյ, Անդիման, Տաշքենդ և Քերքիի քահանայութեան կողմից, Տ. Ներսէս քհ. Տ. Ներսիսեան, ներկայացուցիչ Կարսի և շրջակայքի քահանայութեան, Տ. Ռահակ քհ. Տէր Յարութիւնեան, ներկայացուցիչ Ջրաբերդի գործակալութեան, Տ. Շմաւոն քհ. Բորեան, ներկայացուցիչ Գանձակի քահանայութեան, Տ. Գրիգոր քհ. Գօրգեան, ներկայացուցիչ Գանձակի ա. մասի գործակալութեան, Տ. Եղիշէ քհ. Թարխանեան, ներկայացուցիչ Շուշու քահանայութեան. Տ. Նորայր քհ. Տէր Մովսիսեան, ներկայացուցիչ Վարանդայի և Դիղակի շրջանների քահանայութեան, Տ. Զաւէն քհ. Աղամեան, Խանքենդ աւանից, ներկայացուցիչ Խոչչէնի և Ջրաբերդի քահանայութեան, Տ. Արտէն քհ. Վարդանեան, ներկայացուցիչ Արմաւիր և Եկատերոնաստար քաղաքների քահանայութեան, Տ. Յովհաննէս ա. քհ. Չուրաբեան, Օդեսայից և Տ. Արշակ քհ. Փալճեան, ներկայացուցիչ Նուխու և շրջանի քահանայութեան, որոնք ամենքն ևս պատշաճ եղանակով ներկայանալու արժանացան Ն. Մըրութեան ունկնդրութեան և օրհնութեան:

\* \*

Յունիս 11-ին Մ. Աթոռ ժամանեցին Երևանի փոխթեմակալ Տ. Խորէն և Շամախու թեմի առաջնորդ Տ. Բագրատ Եսլիսկովսները և Աղեքսանդրոսլի փոխանորդ Տ. Արտակ վարդապետը, որոնք և արժանացան նոյն օրը Ն. Մըրութեան առանձին ունկնդրութեան:

\* \*

Յունիս 11-ին Մայր Աթոռ ժամանեցին հետեւալ քահանաները, Տ. Մկրտիչ ա. քհ. Տէր Յակոբեան, Ներկայացուցիչ Ն. Նախիջևանի քահանայութեան, Տ. Գրիգոր քհ. Նոր-Արևեան, Ներկայացուցիչ Ն. Նախիջևանի փոխանորդութեան քահանայութեան, Տ. Ռուբէն ա. քհ. Բէզկիւլեան, հրաւիրուած մասնակցելու ժողովներին, Տ. Երուանդ ա. քհ. Նալբանդեան, Սիմֆերովոլից, Տ. Աստուածատուր քհ. Մետնիկեան, Ներկայացուցիչ Խրիմի քահանայութեան, Տ. Յարութիւն քհ. Տէր Ենօքեան, Ներկայացուցիչ Բեսարիայի և Խերսոնի քահանայութեան (Քիշնի, Արքերման, Հնչեշտ-Շելց, Իզմայիլ, Գրիգորիովոլ), Տ. Սահակ քհ. Տէր Յովհաննիսեան, Ներկայացուցիչ Գէորգեսկ, Մոզուկ, Եղեսիա, ո. Խաչ, Կիոլովոզոկ և Պետիզորսկ քաղաքների քահանայութեան, Տ. Գալուստ քհ. Քարտաշեան, Ներկայացուցիչ Աստրախանի և Յարիցինի քահանայութեան, Տ. Յակոբ քհ. Խաչվանքեան, Տ. Անդրանիկ քհ. Դաւթեան, Տ. Եղնատիս քհ. Տէր Մովսիսեան և Տ. Արմեն քհ. Արքամեան Ներկայացուցիչներ Երևանի և շրջանի հոգեորդասի, որոնք ամենքն ևս արժանացան Ն. Սրբութեան ունկնդրութեան և օրհնութեան:

\* \* \*

Յունիս 13-ին սկսուեցաւ ս. Էջմիածին հրաւիրուած նախապատրաստական ժողովի նիստերն ու զրադումները:

Առաւոտեան 10 ժամին համագումարի բոլոր Ներկայ եղող անդամները, ինչպէս Մ. Աթոռի միաբանութեան, Կոյնութեան և ղրսից եկած աշխարհիկ հոգեորական դասի, անդամները ժողովուեցան Մատենադարանի Ներքին յարկի մեծ դահլիճը։ Հինգ ըոսէ անց դահլիճ մտաւ Վեհ. Հայրապետի Ներկայացուցիչ Գերաշն. Տ. Յուսիկ արքեպիսկոպոս, հետք բերելով Ն. Ո. Օծութեան, յանուն համաժողովի անդամների, ո. Կոնդակը։

Ժողովականները յոտնկայս ընդունելով Ն. Սրբութեան Ներկայացուցչին, որ անցնելով իւր համար պատրաստուած տեղը և զրաւելով բազկաթոռ, բացեց համագումարը ու Հայր

մեր» ազօթքով։ Ապա բոլոր ժողովական հայրերի կողմից երգուեցաւ «Էջմիածին» ի Հօրէ շարականը, որի աւարտումից յետոյ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսը բարձրաձայն կարդաց Վեհ. Կաթուղիկոսի ո. Կոնդակը և ժողովի զբաղման առարկայ հարցերը։

Ապա երգուեցաւ «Աղբիւր Կենաց» շարականը և փակւում է, «Հայր Մեր Տուի Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի կողմից։

Այնուհետեւ Տ. Յուսիկ արքեպիսկոպոսը հակիրճ խօսք ուղղելով ժողովական հայրերին, յոյս յայտնեց, որ իրենց զգոյշ ընթացքով և եկեղեցու շահերն ի նկատի առնելով միայն կդան ցանկալի խորհրդակցական հետևանքի և եթէ ժամանակը սուղէ, մի եօթնեակ միայն, ապա աշխատանքն առաւել ևս մեծ և փութելու պիտի լինի, գոհացնելու և վեհ. Հայրապետին, որ ընդ առաջ զնալով մեր եկեղեցու այժմէական պահանջներին հրաւիրել է մեղ ի դործ և եկեղեցու անդամներին, որոնք մեզնից զհաստոթեան զործ են սպասում։

Տ. Եղիշէ ա. Քհ. Խոսելով քահանայական դասի կողմից, խնդրեց իրենց ամենախոնարհ յարկանաց հաւաստիքը մատուցանել Ն. Մըրութեան իրենց որդիական երախտագիտական զգացումների հետ այն հոգածութեան համար, որ ունի գէպի եկեղեցու բոլոր պահանջները, այն վստահութեան համար, որը քահանայութեան նկատմամբ ունի և որը կաշխատեն արդարացնել։

Ժողովականները խնդրեցին Գեր. Տ. Յուսիկ արքեպիսկոպոսին լինել համազումարի պատուակալ նախադահ, իբրև ներկայացուցիչ Ն. Մըրութեան։

Առենապետութիւնը կազմուեցաւ. Տ. Գէորգ Եպիսկոպոս, Տ. Մեսրոպ ա. Քհ. Մելեան և Տ. Ռուբէն Քհ. Բէկիզիւլեան, քարտուղարութեան հրաւիրուեցան Տ. Արտակ և Լեռն վարդապետներ, Տ. Յովհաննէս ա. Քհ. Չուբարեան, Տ. Դրիգոր Քհ. Նոր-Արեւեան, Տ. Անդրանիկ Քհ. Դաւթեան և Տ. Յարութիւն Քհ. Տէր Ենօքեան։

Յունիս 13-ին Մ. Աթոռ ժամանեցին, Տ. Արտէն քհյ. Սիմոնեան, ներկայացուցիչ Մոսկուայի քահանայութեան. Տ. Անդրէաս քհյ. Առաքելեան, ներկայացուցիչ Սօշիի շըրջանի, Տ. Արտէն քհյ. Բալեան, ներկայացուցիչ Գանձակի ք. և գ. մասի զործակալութեան շրջանի քահանայութեան, Տ. Պողոս քհյ. Մարգարեան, ներկայացուցիչ Հ. Նախիջևանի հոգեոր դասի, Տ. Եղիշիկ քհյ. Անտոնեան և Տ. Յովհաննէս քհյ. Զոթեան, ներկայացուցիչներ Աղէքսանդրապոլի շրջանի դիւղական քահանայութեան, որոնց ամենքին ևս Ն. Սրբութիւնը հաճեց ընդունել և արժանացնել իւր օրհնութեան.

\* \*

Յունիս 14-ին Մ. Աթոռ ժամանեց Անդրէասպեան երկրի քահանայութեան ք. ներկայացուցիչ, Մերվի Արշակ քհյ. Տէր Ռոկանեան, որ արժանացաւ Ն. Սրբութեան ունկնդրութեան և օրհնութեան:

\* \*

Արևմտահայ դաղթականական կազմակերպութիւնների խորհուրդը, դիմած լինելով յունիս 10-ին, Ն. Սրբութեան խնդրել էր, իբրև օժանդակութիւն իւր նախնական աշխատանքների, տրամադրելի անել իրեն 10,000 ռուբլի. Ն. Սրբութիւնը կարեոր համարելով այդ օժանդակութիւնը, յունիս 14-ին պատուիրեց Սինոդին ուղարկել այդ դումարը Վրաստանի առաջնորդին, Արևմտահայ խորհրդին յանձնելու համար:

\* \*

Յունիս 15-ին Մ. Աթոռ ժամանեց Պետրոգրադի քահանայութեան ներկայացուցիչ շնորհունակ Արամ սարկառագ Ազուլեան, որ արժանանալով Ն. Սրբութեան ունկնդրութեան, յայտնեց Պետրոգրադի քահանայութեան և ամբողջ դաղութի խորին յարդանքը և որդիական ակնածանքը առ Սրբ. Հայրապետը:

Վեհ. Հայրապետը օրհնեց նորան և իւր օրհնութիւնը

առաքեց նորանով քահանայական գասին և գաղութի բոլոր անդամներին, որոնք միշտ սիրող զաւակներ են եղել դէպի Մ. Աթոռը և Հայրապետը:

\* \*

Նոյն օրը Մոսկուայից Մ. Աթոռ ժամանեց Շեմարանի տեսուչ Տ. Գարեգին Եպիսկոպոս, որ մայիսի սկզբներին յատուել առաքելութեամբ գնացած էր Ռուսաստանի քաղաքների հայութեան այցելութեան և նոցա նուիրաբերութիւններն ստանալու յօդուած Մ. Աթոռի Շեմարանի պահպանութեան:

Տ. Գարեգին Եպիսկոպոս արժանանալով Ն. Ա. Օծութեան տռանձին ունկնդրութեան, մանրամասն զեկոյց իւր առաքելութեան և նորա հետեանքի մասին:

Մոսկուայի Հայ գաղութը, չնայելով իւր նիւթական ապահովութեան շատ առաւել մեծ չափին, քան է Պետրովադի հայ գաղութը, նորա առաքելութեան դործին հարկաւոր չափով արձագանք չտուեց, այն ինչ Պետրովադը շատ աւելի սիրով ընդ առաջ գնաց Մ. Աթոռի այս մեծ ճշնաժամին, երբ Շեմարանը իւր բոլոր ծանրութեամբ նորտ նիւթական թոյլ ուսերի վերայ է դրուած, երբ Մ. Աթոռի դրամական աղբիւրները շատ առաւել նուազ չափերի են հասել, այն ինչ ծախքերի զոներն օր աւուր են բացւում և այն ևս լայն չափերով։ Այդ երևոյթը, որով Մոսկուայի հայաշատ գաղութը կարևոր օժանդակութիւն ցոյց շտուեց Շեմարանի պահպանութեան դործում, բացատրւում է ժամանակակից սլարադաների բերմամբ, քաղաքական դրութեան և դրամական շուկայի անապահովութեամբ, խոշոր նուիրաբերողների ցրուած լինելով, տեղական կարիքներին մեծ չափով մասնակցելու հոգացութեամբ և այլ մի շարք պատճառներով, որոնք յոյս ունին մօտիկ ժամանակ վերացած լինելով Մոսկուայի Հայ գաղութը իւր դիրքի և բազմութեան չափով զգալի օժանդակութիւն պիտի ցոյց տայ Շեմարանի պահպանութեան դործին, որ համար հայութեան հոգածութեան առարկան պիտի լինի.

և Ա. Աթոռի վերայ պիտի չծանրանայ այսպիսի դժուար պարագաների մէջ:

Չնայելով այս ըոլորին, այնու ամենայնիւ, Մոսկուայի զաղութը իւր լուման տուել է, իբրև օժանդակութիւն Շեմարանի պահպանութեան գործին, նուիրաբերելով քառասուն և երեք հազար ռուբլի:

Շեմարանի Գեր. Տ. Տեսուչը ներկայացրեց Ն. Ոծութեան Պետրովրադի և Մոսկուայի նուիրատուների ցուցակը, որոնցից մի մասն արդէն ստացուած է, իսկ միւսները հետզհետէ կհասնեն:

### Նուիրատուներն են,—

#### ա) Պետրովրադից,

1.	Պ. Պողոս Ղուկասեան	.	.	.	30,000	ռուբլի
2.	» Սիմեոն Ասատուրեան	.	.	.	30,000	»
3.	» Պատուական Մատուրեան	.	.	.	25,000	»
4.	» Մտեփան Գէորգ Լիանովեան	.	.	.	10,000	»
5.	» Հայկ Գեանջեցեան	.	.	.	10,000	»
6.	» Էլիկում Բարայեան	.	.	.	10,000	»
7.	» Արշակ Յունանեան	.	.	.	10,000	»
8.	» Գրիգոր Վանեցեան	.	.	.	10,000	»
9.	» Յովհաննէս Շաղինեան	.	.	.	5,000	»
10.	» Դաւիթ Լիանովեան	.	.	.	5,000	»
11.	» Գէորգ Փիթոյեան	.	.	.	5,000	»
12.	» Մ. Տէր-Դաւթեան	.	.	.	5,000	»
13.	» Յովհաննէս Մելիքեանց	.	.	.	3,000	»
14.	» Աղամ Փեշիքարեան	.	.	.	2,000	»
15.	» Ռոսուցապետ Աւետիս Քալանթար				100	»
16.	Գնդապետ Թ. Յովհէվեան	.	.	.	25	»
17.	բժ. Տէր Ներսիսեան	.	.	.	10	»

Ընդամենը 160,135 ռ

#### բ) Մոսկուայից

1.	Աղարէկ Գէորգեան	.	.	.	10,000	»
2.	Յակոբ Էքիզլէր	.	.	.	1000	»
3.	Գրիգոր Բարայեան	.	.	.	5000	»

4.	Գաղղատար Արդումանեանի անունով	
	Առևտրական տունը	5,000 ռուբլի
5.	Գրիգոր Առաքելեան	3,000 դ
6.	Տիկ. Սովիտ Էքիզլէր	1,000 դ
7.	Մուկուայի Հայ Կանանց Յանձնաժողովի կողմից հինգ սան, իրենց որբանոցների ընդունակ վոքրներից, տարեկան 2000 ռուբլի, մինչև աւարտման շրջանը, ըն- դամենը	18,000 դ
	Ընդամենը	43,000 դ

Արով Պետրովրադի և Մուկուայի Հայ գաղղոթների  
օգնութիւնը հասնում է 203.135 ռուբլու: Այս բոլոր գու-  
մարները մտնում են Մ. Աթոռի գանձարանը, իրեն սե-  
պականութիւն նորա, պայմանով, որ գումարը մնայ ան-  
ձեռնմխելի և 0.00%-ը միայն գործադրութիւն նուիրասու-  
ների անունով սաներ պահելու կրթական դորձին:

Դ. — Պետրովրադի Եկեղեցական խորհուրդը, որ միշտ  
առանձին հազարութիւն և սեր է ունեցել գեղի Մ. Աթոռի  
ձեմարանի բաղմաթիւ կարիքները և միշտ էլ սիրով ընդ  
առաջէ գնացել նորան օպնելու դորձին, իւր առատ նուի-  
րաբերութիւններով, խօսացել է 1916/17 ուսումն. տարուայ  
պակասուրդը ծածկել, որ մի քանի տասնեակ հազարի կա-  
րող է հասնել:

Ի՞նչ մերաբերում է Ռուսաստանի միւս քաղաքներին,  
ինչպէս Ն. Նախիջեան, Արմատիր, Եկատերինոգոր և Կով-  
կասեան քաղաքներին, Ժամանակի սղութեան և ներկայիս  
անյաջող պարագաների բերմունքի պատճառով, այդ վայ-  
րերի այցելութիւնը թողնուած է մօտիկ ապագայի և յար-  
մար պարագաների:

Եւ յոյս ունինք, որ թէ Մուկուայի գաղղոթը և թէ  
միւս վայրերի հայութիւնը գիտակից սիրով պիտի արձա-  
գանք տան ձեմարանի գոյութեան պահպանութեան և  
նորա ապագայ բարգուաճման մեծ խնդրին:

Յունիս 15-ին, ցերեկուայ ժամը 11 $\frac{1}{2}$ -ին, եկեղեցական նախալատրաստական ժողովի առենապետութիւնը ներկայացաւ Ն. Արքութեան և ըերանացի զեկուցումն արեց համագումարի զբաղումների մասին:

Ներկայացան առենապետ Տ. Գէորգ Եպիսկոպոս, Տ. Մեսրոպ ա. քհյ. Մելեան և Տ. Ռուբէն ա. քհյ. Բէկդիլեան, ինչպէս քարտուղարներ՝ Տ. Լոռն վարդապետ, Տ. Յովհաննէս ա. քհյ. Չուրարեան, Տ. Գրիգոր քհն. Նոր-Արևեան, Տ. Անդրանիկ քհյ. Դաւթեան և Տ. Յարութիւն քհյ. Տէր Եսօքեան:

Այսուհետեւ առենապետութիւնը, յանձին իւր առենապետներից մէկի, ներկայանում էր և համագումարի զբաղումների մասին էեկուցումներ տալիս Ն. Արքութեան:

\* \*

Յունիս 16, ուր. Երեկոյեան և Գրիգոր Լուսաւորչի պատուական նշխարաց զիւտի նախատօնի ժամերգութեան Ն. Արքութիւնը հաճեց տաճար իջնել:

Ժամերգութեան ներկայ էին նաև համագումարին եկած քահանայական դասի քոլոր ներկայացուցիչները, որոնց յունիս 10-ին արդէն արտօնուած էր Վեհ. Հայրապետի կողմից փիլոն առնել և դասերում կանգնել, քանի որ, ըստ աւանդական սովորութեան, զրոից եկած քահանայական դասի անդամները մինչև այդպիսի արտօնութիւն չունենան, իրաւունք չունին Մ. Տաճարի մէջ դաս ելնել, այլ առանց փիլոնի կանգնում են յետին դասերի յետեր, ժողովրդի մէջ:

Ժամերգութիւնից յետոյ Վեհ. Հայրապետին Եպիսկոպոսական դասն առաջնորդեց մինչև Վեհարանի աւագ դուռը, այն ինչ միաբանական և քահանայական դասի անդամներն, ըստ արարողական կարդի, Մ. Մթուի, Տաճարում երկշար կանգնում ողջունեցին Տաճարից ելնող Հայրապետին:

\* \*

Ն. Նախիջևանից, հանգուցեալ Ռարդիս Խռճեանի կտակակատարների կողմից պ. Արքահամ Զամինեան, ներկայացրեց Ն. Սրբութեան կտակած զումարի մնացորդը 20,312 ռ. 50 կոպէկ, վերածուած զանազան փոխառութեանց արժեթղթերի:

Ն. Սրբութիւնը ուղարկելով այդ զումարը ամբողջապէս ս. Էջմիածնի Սինօդին խւր յունիս 16, թ. 1079 մակագրական պատուէրով կարդաղրեց աւելացնել այդ զումարը նախկին զումարի վերայ, որի մասին վեհ. Հայրապետու առանձին կոնդակ էր տուած 1914 թ. դեկտ. 18-ին, թ. 1955.

Դրամն սաանալու մասին յայտնուեց կտակակատարներին ի գիտութիւն:

\* \*

Ա. Լուսաւորչի նշխարաց զիւտի տօնի օրը, յունիս 17-ին, Ն. Սրբութիւնը հաճեց տաճար իջնել և ներկայ լինել ս. պատարագին:

Պատարակիչն էր Ղարաբաղի թեմի կառավարիչ Տ. Վահան Եպիսկոպոս:

Պատարագին երգում էր քահանայական դասից կաղմուած երգչական խումբը, քառաձայն, խմբավետութեամբ Օղեսիայի աւագերէց Տ. Յովհաննէս ա. քահանայի:

Ն. Սրբութեան վերայ երգեցիկ խմբի երգեցաղութիւնը հաճելի տպաւորութիւն թողնելով, վեհ. Հայրապետի յատուկ պատուէրով Դիւտնապետ Տ. Տիրայր Եպիսկոպոսը Վեհարան հրաւիրելով Տ. Յովհաննէս ա. քհյ. Չուրարեանի, Ն. Ա. Օծութեան գոհունակութիւնը և օրհնութիւնը յայտնեց իրեն և խմբին մասնակցող քահանաներին:

\* \*

Յունիս 18-ին, կր. Մայր Տաճարում պատարագելու արտօնութիւն շնորհուեց Սիմֆերոպոլի աւագ երէց Տ. Երուանդ քհյ. Նալբանդեանին:

\* \*

Յունիս 18-ին, համագումարի առենալետները ներկայանալով Ն. Սրբութեան խնդրեցին հաճել արտօնել ժողովի զրադմունքները մի քանի օրով ևս երկարելու, քանի որ անկարող եղան արտօնած եօթնորեայ շրջանում իրենց առաջ դրած խնդիրների և հարգերի բնութիւններն աւարտել:

Ն. Սրբութիւնն ի նկատի ունենալով նոցա խնդիրը, համագումարին դիւրութիւն բնձեռեց և արտօնեց մի քանի օր ևս շարունակել իրենց զրադմունքները:

\* \* \*

Համագումարի ժողովական անդամների կողմից ցանկութիւն յայտնուած լինելով ամբողջական մի խմբանկար ունենալ համագումարին մասնակցող անդամների, առենալետութեան միջոցով խնդրել Ն. Ս. Օծութեան հաճութիւնը իւր ներկայութեամբ պատուել իրենց և թոյլ տալ իւր կենդանագիրն ևս ունենալ ընդհանուր խմբանկարի մէջ:

Ն. Սրբութիւնը հաճութիւն ունեցաւ գոհացում տալ նոցա ցանկութեան և յունիս 21-ի, առաւոտեան, Մ. Տաճարի արևմատեան աւագ դրան առաջ նկարուեցաւ Սիարանական Ռւխտի և համագումարին մասնակցող քահանոյական դասի հետ:

\* \* \*

Սիմֆերոպոլի աւագ երեց Տ. Երուսանդ քհյ. Նալբանդեան, ի յիշատակ իւր քահանայութեան 15-ամեակի, որ լրացաւ յունիս 16-ին և իրրե երախտազիտութեան արտայայտութիւն դէպի Մ. Աթոռն ու նորա հոգեոր ճեմարանը, որը հովանու տուկ սնուել ու կըթութիւն էր ստացել, դիմելով Ն. Սրբութեան խնդրեց բնդունել իւր և իւր այլու հիմաստարինելի կողմից տարեկան 200 սուրբ, յօպուտ Մ. Աթոռի հոգեոր ճեմարանի, մի ուն պահելու ժամանակաշրջանի ընթացքով, այն է ինն տարի:

Ն. Սրբութիւնը օրհնելով նոցա իւր գոհաւնակութիւնը յայտնեց Դիւանի միջոցով, դրաւոր, յունիս 22-ին:

Յունիս 22-ին ս. Մահակի և ս. Մեսրոպի տօնը սովորական կարգով կատարուեցաւ ուխտազնացութեամբ Օշական ս. Մեսրոպի զերեզմանը, որին մասնակցեցին միաբանութեան անդամները, համագումարին եկած քահանայական դասը և ձեւմարանի աշակերտութիւնը:

Մ. Տաճարում այդ օրը պատարագին Ն. Մըրութիւնը ներկայ էր:

Պատարագիչն էր, ըստ առանձին հաճութեան վեհ. Հայրապետի, Տ. Ռուբեն ա. քհյ. Բէկդիւլեան:

Պատարագից յետոյ քահանայական դասի առանձին խնդրով, կատարուեցաւ Հայրապետական մաղթանք, որին ներկայ էր Ն. Ա. Օծութիւնը:

Օշականում տօնի առթիւ պատարագիչն էր Տ. Մեսրոպ Եսլիսկովոս:

\* \*

Պատարագից յետոյ ընդհանուր հոգեհանգստեան կարդկատարուեցաւ, ըստ հաճութեան և ըստ խնդրոյ քահանայական դասի, Մ. Տաճարի հովանու տակ հանգստացող Հայրապետների համար:

Հոգեհանգստեան սկաշտաման ներկայ էր ամբողջ միաբանական ուխտը, քահանայական դասը, ուխտաւորների, զիւղի բնակիչների և զաղթականների մեծ քազմութիւն:

Ապա նոյն հանդիսաւորութեամբ ներկայ եղողներն, ամենքն ևս, զիմեցին դէպի Մ. Աթոռի անտառի ստորին բաժնում տառապանքների աշխարհից աղատաղրուած և իրենց հանգիստը դատձ այն հազարաւոր զաղթականների հանրական զերեզմանատունը, ուր հայութիւնը մի արցունքի, վշտի, անվերջ տանջանքի վայր է ստեղծել, նման այն անթիւ ցաւոց-վայերի, որ վերջին արհաւիրքները Մայր Հայրենիքի ամէն մի անկիւնի մէջ են կանգնեցրել:

Անշուշտ շատ առաւել մեծ պիտի լիներ այդտեղ հանգստացող, արցունքի ծով անցածների քանակը, եթէ նահատակութեան աշխարհից իրենց Մօր զիրկը զիմաւորող հիւծուած, տանջուած և մահուան դուռը հասած զա-

ւակներին ո. Եղմիածինը մայրաբար չոլատսպարեր, շինամէր, շգուրզուրար և մահուան ճիրաններից չաղատէր իւր ամէն ինչ մոռացած և ժողովրդին խսկապէս նուիրուած միաբանութեան անդամների ձեռքով, այն լայն և առաս օգնութեան միջոցով, որ «Եղբայրական Օգնութիւն» անունն է կրում։

«Եղբայրական Օգնութիւնը» մտադիր է այդ վայրում մի յուշարձան կանգնեցնել, «Եղբայրական գերեզմանի» վերայ, ուր ամփոփուած են հայի տառապանքը և որ յուշարձան կլինի նաև Մ. Աթոռի սփոփանքի ու գթութեան գործի։

\* \*

Ա. Աթոռ հրաւիրուած հոգեորսական դասի նախապատրաստական խորհրդակցական ժողովի զբաղմունքները վերջացան յունիս 23-ին։

Թահանայական դասը նոյն օրը առանձին ունկընդրութիւն ստանալով Ն. Սրբութիւնից, ներկայացաւ Վեհ. Հայրապետին իւր շնորհակալիքները յայտնելու, Վեհ. Հայրապետի օրհնութիւնն ստանալու և ցրուելու իրենց պաշտօնավայրերը։

Ժամը 11<sup>1</sup>/<sub>2</sub>-ին քահանայական դասը, զլուխ ունենալով ժողովի առենապետութիւնը, Տ. Դիւնապետի կողմից առաջնորդուեցաւ Հայրապետարանի արտաքին դահլիճը և կիսարուրակ կանգնած սպասում էր Ն. Սրբութեան։

Սրբ. Հայրապետը եխելով ներքին սենեակներից ողջունեց քահանայութեան, որի կողմից առենապետներից Տ. Գէորգ Խալիսկոսը, ջերմ շնորհակալութիւն յայտնեց այն ասպնջականութեան համար, որին արժանացան նոքա Մ. Աթոռի հովանու տակ, որի դարաւոր հովանին սերունդներ շարունակ վայելել է հայ ժողովուրդն ու նորա պաշտօնէութիւնը։ Աղա քահանայութեան երախտադիտութեան ու զգացումների թարգման դարձաւ՝ յայտնելով այն սիրոյ, յարգանաց և երախտագիտութեան մասին, որ տանում են իրենց հետ Մ. Աթոռից նորա Հովուապետից, որ իրեն

արթուն պահապան իւր հօտի, բարի հովիւ իւր եկեղեցու  
և արթուն դէտ իւր պաշաօնէութեան ի մի ժողովեց նորա  
ներկայացուցիչներին և կարող անդամներին, որպէս զի  
ի մօտոյ ծանօթանան այն խնդիրների, հարցերի, կարիք-  
ների հետ, որ ժամանակը և պարագաները դրել են մեր  
առաջ: Այդ խնդիրների մէջ կան հարցեր, որ հանրական  
ընոյթ են կրում, որին նորա մօտեցան ամենայն խոհե-  
մութեամբ և զգուշութեամբ, շատ բան տանելով իրենց  
հետ, շատ աւելի լայն հայեացք ստանալով խնդիրների  
լուծման տեսակէտից, առաւել մօտ տեսնելով եկեղեցու  
կարիքներն ու նորա մեծ դերը, որի համար պատրաստ  
են ամբողջ հոգով, որով և եռանդով աշխատելու: Կան  
խնդիրներ, որոնք բուն բահանայական դասին էին վերա-  
բերում, որոնց լուծման նպաստելու մէջ անձամբ տեսան  
հոգեոր իշխանութեան հոգածութիւնը դէսլի քահանայական  
դասը, որի տպաւորութեան տակ և կթողնեն Մ. Աթոռը,  
հաւատով որ նա երբէք չէ մոռանում իւր քահանայական  
դասը, նորա կարիքներն ու բարեկեցութիւնը՝ ըստ հոգե-  
կանի, ըստ մտաւորի և ըստ կենցաղականի և որ այդ  
բոլորի նախաձեռնողն է Հայոց Հայրապետը, նոցա աւելի  
և շնորհապարտ է կացուցանում դէսլի եկեղեցու այժ-  
մեան Գլուխը: «Օրհնեցէք, Վեհ. Տէր, աւարտեց իւր  
խօսքը նա, Զեր որդիներին և եկեղեցու պաշտօնեաներին,  
որոնք եկան կենդրոնը և հաւատով զօրացած են դառնում  
դէսլի այն միջավայրը, ուր շատ անդամ վհատած են եղել:  
Օրհնեցէք, որպէսզի այդ հաւատով զօրացած, ծառայեն  
այն մեծ զործին, որ եկեղեցին դարեր շարունակ մատու-  
ցել է Հայ ժողովրդին»:

Ապա քահանայական դասի կողմից առաջ զարով Տ.  
Արքահամ ա. քհյ. Դադաղեանը, կարող իւր ընկերակից-  
ների կողմից հետեւել ուղերձը.

«Զերդ Ա. Օծութիւն,

Վեհավառ Տէր,

«Համուր Հայ հօտիդ ուստահայ հատուածի զանազան  
մասերից աշխարհիկ հողեորականութեան ներկայացուցիչ-

ներս Զերդ Վեհափառութեան հայրական հոգածութեամբ հրաւիրուեցանք մեր աւագ եղբայրների՝ ս. Էջմիածնի միաբանութեան հետ միասին քննելու և երեան հանելու մեր Եկեղեցական աղզային կեանքի այլ և այլ թերութիւններն ու ցաւօտ կողմերը, նոցա վերացման դարմանները որոնելու և Զերդ Վեհափառութեան բարձր ուշադրութեանն առաջարկելու համար:

Իւրովսանն, բայ չափու կարողութեան կատարած լինելով սոյն պարտաւորութիւնը, Համազումարի քահանայական աշխարհիկ դասը իւր հրաժեշտի ողջոյնի հետ միասին նաև երախտադիտութեան ջերմ զգացմունքն է արտայացում Զերդ Վեհափառութեանն այն մասին, որ առիթունեցաւ բացի ընդհանուր օրակարդի խնդիրների որոշումից, նաև ծանօթանալու վիճակարձարար եղբայր Ժողովականներին, մտքերի շիմամբ խորապնել անձնիւր սեպհական ըմբռնումները, որ ամեն մի համազումարի էական օդուաններից մէկն է:

Քահանայական դասը յոյս է յայտնում, որ յանախտեղի կունենան սոյնանուման համախմբումներ:

Այլ և խոնարհաբար մատչելով ի համրոյր Ա. Օծութեանդ հայրական ս. Աջոյն, ջերմ շնորհակալութիւն է յայտնում իւր վայելած սիրալիր հիւրասիրութեան համար և մաղթում է առողջութիւն Վեհիդ և յարատե պայծառութիւն հայ աղզային Եկեղեցւոյ,

ի 22 յունիսի

1917 ամի

ի ս. Էջմիածին.

Եղիշէ ա. քհյ. Գեղամեան

Տաճառ ա. քհյ. Մարազեան

Մեսրոպ ա. քհյ. Մելեսն

Արքահամ ա. քհյ. Լազարեան

Մկրտիչ ա. քհյ. Տէր Յակոբեան

Արշէն քհյ. Մարգարեան

Ռուբէն ա. քհյ. Ռէկիւլեան

Գտլուստ քահ. Գարտաշեան

Յակոբ քահ. Խաչվանքեան

Արշակ քահ. Տէր Ռոկանեան

Անդրանիկ քահ. Դաւթեան  
 Սահակ քահ. Տէր Յովհաննիսեան  
 Սմբատ քահ. Սարգսեան  
 Յարութիւն քհյ. Տէր Ենօքեան  
 Արսէն քհյ. Միմէօնեան  
 Գրիգոր քհյ. Նոր-Արևեան  
 Միմէօն քհյ. Արրահամեան  
 Յովհաննէս ա. քհյ. Զուրարեան  
 Եղնիկ քհյ. Ռշտունի  
 Տիգրան քհյ. Վարդանեան  
 Յովհաննէս քհյ. Զովեան  
 Շմաւոն քհյ. Բորեան  
 Եղիշէ քհյ. Թարխանեան  
 Արշակ քհյ. Փալշեան  
 Զաւէն քհյ. Աղամեան  
 Ներսէս քհյ. Տէր Ներսէսեան  
 Նորայր քհյ. Տէր Մովսիսեան  
 Գրիգոր քհյ. Գորգեան  
 Արսէն քհյ. Վարդանեան  
 Անդրէաս քհյ. Առաքելեան  
 Արամ սարկառագ Ազուլեան  
 Վահան քհյ. Աղաղաղեան  
 Երուանդ ա. քհյ. Նալբանդեան  
 Սահակ քհյ. Տէր Յարութիւնեան  
 Աստուածատուր քհյ. Մեղնիկեան

Վեհ. Հայրապետը իւր գոհունակութիւնն արտայայ-  
 տելով քահանայական դասի զգացումների համար, յայտնեց  
 որ Խնքը հողով զոհ է նոցա Մ. Աթոռում տեսնել, ի մի  
 խմբուած այն բեղմնաւոր ապաղայի դործին, որի համար  
 նոքա հրաւիրուած են Իւր հրամանով: Խնքը ի մօտոյ ծա-  
 նօթ է արդէն համազումարի նիստերի և զրադումների  
 ընթացքին, որի մասին պարբերաբար տեղեկութիւններ է  
 հաղորդել և զեկուցել Ատենապետութիւնը, զոհ է, որ քա-  
 հանայական դասը իւր ոյժերի և մտաւոր կարողութեան  
 չափով սիրով աշխատակցել է այդ ամենին և իրենց խո-

հուն և զգաստ եղրայրակիցների մտաւոր ղեկավարութիւնը  
ունեցել է կարեւոր ազդեցութիւն շափառքելու և խռհա-  
կանութեան ուղիով ընթանալու այն մեծ զործին, որ եկե-  
ղեցու ներքին կեանքին է վերաբերում։ Մեր եկեղեցական  
ներքին կեանքի մէջ եթէ կան պահանջներ, որոնք զոհա-  
ցումն են պահանջում, այդպիսիները բնական ձանտպար-  
հով կլինին, իրքն անյետաձգելի խնդիրների լուծումն.  
սակայն եկեղեցին և եկեղեցու կեանքն ու եկեղեցականի  
կենցաղական հարցերն այն խնդիրներից չեն, որոնք յա-  
խուոն թափով փոփոխութիւնների ենթարկուել կարող են.  
դոքա այն խնդիրներից են, որ ամենայն աշալրջութիւն,  
զգաստ կշռադատութիւններն են պահանջում, անցեալի պատ-  
մական շինութեան մէջ ճեղքեր չգոյացնելու, սակայն,  
նոր պահանջներին և զոհացում տալու ձգտումով։ Ուրախ  
է, որ նախապատրաստական ժողովի խորհրդակցութիւն-  
ներն են այդ եղրակացութեան են յանգած։ Այդ եղրա-  
կացութիւնները որոշումների վերածած ժողովական ար-  
ձանագրութիւններով իրեն է մատուցուած։ աշքի անցնելով  
այդ արձանագրութիւններն ու որոշումները Խոքը պատ-  
րաստ է այժմենից իսկ կեանքի մէջ մուծել, եթէ ինքն  
անհրաժեշտութիւն համարէ և կարեւոր եկեղեցու և նորա  
պաշտօնէութեան շահի տեսակէաից։ Որպէս եկեղեցու Գլուխ  
և նորա շահերին նուիրուած անձն, քահանայական դասը  
պէտք է հաւատով վերաբերէ, որ Խոքն իրքն Գլուխ և վերին  
տեսուչ եկեղեցու երբէք չէ մոռանալու եկեղեցու շահերը.  
այդ շահերի լրջմիտ քննութեան խնդիրն է, որ այսօր հայ  
քահանայութեան ներկայացուցիչները իւր առաջ են կանգ-  
նած՝ կտտարած իրենց պարտականութիւնը, իրենց խոհերի,  
զգացումների և ըղձերի արդիւնք որոշումները քերելով իւր  
առաջ։ Այդ որոշումներից այնպիսիները, որոնք այժմէն  
իսկ կեանքի մէջ մտցնելու յարմարութիւն չեն ունենայ,  
սակայն իրքն խնդիրներ, կը արուեն իւր կողմից, ընտ-  
րութեամբ ի հարկէ, ապագայ Ազգային Սահմանադիր ժո-  
ղովի առաջ, որպէս զի հանրական քննութիւնն իւր կնիքը  
գնէ նոցա վերայ։

Ապա անդրադառնալով քահանայութեան մեծ դերին, որ նա ունեցել է պատմական անցեալի զանազան շրջաններում և այն կենսական գերը, որ նա պիտի կատարէ այսօր և ապագայում, յոյս յայտնեց որ քահանայական դասն, «իբրև աղ երկրի» և եկեղեցու հաւատացեայների «մտաւոր ճրադ» կարող պիտի լինի ինքն իւր գոյութեան իմաստն ըմբռնել և կանգնել այն բարձրութեան վերայ, որ եկեղեցին, այսինքն հաւատացեայների ամբողջութիւնը նոցա է յատկացրել և այդ ուղիներն են՝ մտաւոր մակերեսոյթի բարձրացումն, կրթական վարկ, բարոյական առաքինութիւնների մարմացումն, նուիրուած անձի զգացումն և բուն եկեղեցական լինելու ներքին ձգտում և ոչ միայն «իբրև զծնծդղայ, որ զօղանջէ» ի տարաժամու։ — Վանական հոգնոր դասը համեմատաբար շատ աւելի պատրաստուած է քան քահանայական դասը. այդ է եկեղեցու պահանջը և քահանայական դասն ինքն իսկ նախանձախնդիր պիտի իւր ամբողջականի, իբրև մի մարմնի, բարձրացման, որին նա եթէ ձգտում է և կամենում է այն զործոն դերը խաղալ և բարոյական աղղակը լինել, որ կամենում է և ձրդում է ձեռք բերել։

«Դնացէք, պատուիրեց վեհ. Հայրապետը, Զեր ժողովրդի մէջ եղէք այն բարոյականի հիմնաքարերը, ինչ որ եղել են Ձեր նախնիք իրենց բարոյական մեծութեամբ։ Մի լինիք միայն սմշակլ եկեղեցւոյ, այլ հոգով եռուն, մտքով ուռնացած սծառայք անպիտանք որոնք անում են այն ինչ որ իրենց բարոյական պարտիքն են թելադրում։ Եղէք հոգով նուիրուած այն պաշտօնին, որին կոչուած էք, հաւատքով դէսի այն զործը, որին խոստում էք տուել նուիրուելու։ Օրհնեալ լինիք։ Շնորհակալ եմ և գոհ Զեր աշխատութիւնից և զործակցութիւնից։ Միշտ էլ պատրաստ եղէք զործի նուիրուելու, երբ կկոչուիք։

Քահանայական դասը հերթով մօտեցաւ Հայրապետի աջն ու օրհնութիւնն առնելու։

Ունկնդրութիւնը վերջացաւ Ժամը 12, 10-ին։



Ն. Արբութիւնն իրքի իւր զոհունակութեան նշան հաճեց համադումարին եկած քահանայական դասից մի քանիսին իւր Հայրապետական շնորհաց արժանացնել տալով հետեւալներին, ըստ իրենց արժանեաց և դրեց, պարզեներ.

Տ. Արսէն քհյ. Վարդանեանին՝ աւագ քհյ. պատիւ

Տ. Յովհաննէս ա. քհյ. Զուրարեանին—կամիլաւկա

Տ. Երուանդ ա. քհյ. Նալբանդեանին >

Տ. Գալուստ քհյ. Քարտաշեանին >

Տ. Սահակ քհյ. Տէր Յովհաննիսեանին >

Տ. Արսէն քհյ. Ահմէօնեանին >

Տ. Գրիգոր քհյ. Նոր-Արեւեանին >

Տ. Տիգրան քահ. Վարդանեան խաչ և կամիլաւկա

Տ. Գրիգոր քհյ. Գորգեանին—խաչ:

\* \*

Նոյն օրը Ն. Արբութեան ըաղդ ունեցաւ ներկայանալու Վարագայ վանքի հողաբարձութեան անդամ պ. Աւետիս Թերզիբաշեան, որ զեկուցումն տուեց Վարագայ այժմեան տնտեսական վիճակի մասին:

\* \*

Յունիս 24-ին Մ. Աթոռից իրենց պաշտօնավայրերը մեկնեցին Դարաբաղի թեմի կառավարիչ Տ. Վահան եպիսկոպոս և Նուխու փոխանորդ Տ. Երեմիա վարդապետ, իրենց քահանայութեան ներկայացուցիչների հետ:

\* \*

Յունիս 26-ին Մ. Աթոռից իւր պաշտօնավայրը մեկնեց Գանձակի փոխանորդ Տ. Լեռն վարդապետ:

\* \*

Յունիս 27-ին Մ. Աթոռից մեկնեցին օտար քաղաք-ներից ժամանած քահանայական դասը, որոնց համար Հայրապետական Դիւանի հոգածութեամբ առանձին վագոն էր յատկացրած Էջմիածնի կայարանից մինչև Տփխիսի կայարանը:

\* \*

Նոյն օրը իւր պաշտօնավայրը, Քիշնե, մեկնեց Ն. Նախշիանի և Բեսարարիայի վիճակային ատենի նախադահող՝ Տ. Մուշէ վարդապետ:

\* \*